

ՆՈՐԻՆ ՍՈՒՐԲ ՕԾՈՒԹՅՈՒՆ Տ. Տ. ՎԱԶԳԵՆ Ա
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Վեհափառ Հայրապետի նախագահությամբ գումարված Գերագույն հոգևոր խորհրդի ս. թ. փետրվարի 11-ի նիստում, քննության առնվելով Նորին Սրբության գահակալության քսանամյակը հանդիսությամբ նշելու հարցը, ընդունվեցին հետևյալ որոշումները.

1. Նկատի ունենալով, որ այս տարին նվիրված է Ապրիլյան մեծ եղեռնի վաթսունամյակի տխուր ոգեկոչումին, Հայոց Հայրապետի գահակալության քսանամյակը տոնել առաջիկա տարի՝ 1976 թվականի աշնանը, սրբալույս մյուռոնի օրհնության հանդիսավոր առիթով:

2. Մայր Աթոռում կազմել կենտրոնական հանձնաժողով, որի պարտականությունը լինի հայրապետական հոբելյանական հանդիսությունների կազմակերպումը:

3. Հոբելյանական հանդիսությունների և միջոցառումների մասին հետագայում առանձին հաղորդագրություն հրապարակել մամուլում:

ԳԵՐԱԳՈՒՅՆ ՀՈԳԵՎՈՐ ԽՈՐՀՈՒՐԴ

Մայր Աթոռ ս. Էջմիածին,
15-ը փետրվարի 1975 թ.